

## ՔՐԵՎԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՅՈ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՔԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՅ ՔՐԵՎԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

#### **ՍԵՐԳԵյ ՄԱՐԱԲՅԱՆ**

ԵՊԴ քրեական դատավարության և  
կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ,  
ՀՅ դատական դեպարտամենտի  
կազմակերպահրավական վարչության պետ

**Ք**այաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է (Սահմ. 1-ին հոդված), որին բնորոշ է իրավունքի գերակայությունը և կամայականության բացառունքը, մարդը, նրա արժանապատվությունը, իմնական իրավունքներն ու ազատությունները համարվում են բարձրագույն արժեքներ, իսկ պետությունը, լինելով սահմանափակված այդ իրավունքներով և ազատություններով, **պարտավոր է** ապահովել դրանց պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (Սահ. 3-րդ հոդված):

Հիմնական օրենքի մակարդակով նման դրույթներ ամրագրելով՝ պետությունը փաստացի պարտավորվել է ապահովելու յուրաքանչյուր անձի սոցիալական, տնտեսական, քաղաքացիական և այլ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, որի իրականացնան հնարավորությունը ապահովում է ճյուղային օրենսդրությամբ (խոսքը հատկապես քրեական, քրեադատավարական, քաղաքացիական իրավունքի նորմերի նաև է) այդ հարցերի կանոնակարգմանը նվիրված նորմեր սահմանելու և կիրարկումն ապահովելու միջոցով:

Նոր տնտեսական և քաղաքական պայմանները, որում ներկայումս գտնվում է

Հայաստանի Հանրապետությունը, բարձրացնում են հատկապես անձի գույքային իրավունքների նշանակությունը, այդ թվում՝ տուժողին հանցագործությանը պատճառված վնասի հատուցման Սահմանադրությամբ ամրագրված իրավունքի նշանակությունը (Սահ. հոդված 20): Հատկապես, եթե հաշվի առնենք այն հանգանանքը, որ տուժողին պատճառված վնասի հատուցման իրավունքը առաջին անգամ բարձրացվեց Սահմանադրական մակարդակի և ճանաչվեց սահմանադրահրավական ինստիտուտ:

Հանցագործություններից տուժողների գույքային իրավունքների պաշտպանությունը ներկայում համարվում է միջազգային իրավունքի առաջատար ուղղություններից մեկը: Միջազգային մակարդակում հանցագործությունից տուժողներին պատճառված վնասների հատուցման հիմնախնդիրն նշանակալի ուշադրություն դարձվեց սկսած նախորդ դարի 70-ական թվականներից, հատկապես 1975 թվականի սեպտեմբերի 1-12-ը ժնևում կայացած ՍԱԿ-ի 5-րդ կոնգրեսում, որը նվիրված էր հանցագործությունների կանխարգելման և իրավախախատների նկատմամբ վերաբերնունքի հարցերին: Այդ կոնգրեսի ամփոփիչ փաստաթղթում ամրագրված է. «...պատճառված վնասի սիմվոլիկ հատուցումը դժվար թե կարողանա մասամբ փոխադարձ այն ցավերը և տառապանքները, որոնք կրել են տուժողները և նրանց ընտանիքի անդամները, հատկապես երր բացակայում են հասարակության քաջալերունքը և հոգատարությունը»: Հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման խնդիրը լուծելու հաջորդ նշանակալի քայլը եղավ «Բննությամբ կատարված

հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» Եվրոպական կոնվենցիայի 1983 թ., ՍԱԿ-ի «Հանցագործության և իշխանության չարաշահման զոհերի արդարադատության հիմնական սկզբունքների մասին» հոչակագրի (1985 թ.), ԵԽՍԿ «Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» N R (85) 11 (1985 թ.) հանձնարարականի և այլ փաստաթղթերի ընդունումը: Հիշյալ փաստաթղթերուն ամրագրված ոսկե կանոնն այն է, որ քրեական արդարադատության համակարգի հիմնական գործառույթը պետք է լինի հանցագործություններից տուժողների խախտված իրավունքների վերականգնումը և մասնավորապես՝ հանցագործությամբ պատճառված վնասների փոխհատուցումն ապահովելը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ առկա են հանցագործությամբ պատճառված վնասի փոխհատուցման միջազգային նվազագույն չափանշներ:

Հանցագործությունից տուժողների գույքային իրավունքների ապահովանությունը ունի սոցիալական հատուկ նշանակություն ոչ միայն այն պատճառով, որ ամրագրված է Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով, այլև նրա համար, որ նոր շուկայական տնտեսության պայմաններում դրանք ձեռք են բերում մրցունակություն անձի մնացած իրավունքների նկատմամբ: Այդուհանդեռ, հանցագործություններից տուժողների գույքային իրավունքների ապահովանության գործող օրենսդրական կանոնակարգումները և դրանց իրավակիրառական պրակտիկան վկայում են այն մասին, որ այդ պաշտպանությունը ոչ արդյունավետ է, այն հնարավորություն չի տալիս ամբողջությամբ վերականգնելու տուժողի գույքային իրավունքները և որպես հետևանք ապահովելու նաև Սահմանադրությամբ ու միջազգային իրավական ակտերով ամրագրված սկզբունքների իրականացումը:

Պաշտոնական վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2008 թվականի դրությամբ գրանցված հանցագործությունների ընդհանուր թվի (9271) մոտ կեսը (4297)

բաժին է ընկնում սեփականության դեմ ուղղված հանցագործություններին, որոնց շարքում անձնական գույքի հափշտակությունները կազմում են մոտ 90 % (3769): Մինչդեռ 2008 թվականի դրությամբ հնարավոր է եղել վերականգնել ֆիզիկական և իրավաբանական անձանց հանցագործությամբ պատճառված վնասների մոտ 40%-ը (իրավաբանական աձանց դեպքում՝ 7585777.7-ից 3618915.4-ը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ 4049555.4-ից 1790211.5-ը):<sup>1</sup>

Դրանով պայմանավորված՝ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելը, դրա իրականացումն ապահովելու համար պայմաններ ստեղծելը, տուժողի խախտված իրավունքների վերականգնումը ձեռք են բերում հատուկ արդիականություն:

Հանցագործությունից տուժողների գույքային իրավունքների պաշտպանության համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված են տարբեր իրավական նեխանիզմներ, մասնավորապես՝ 1) իրեղեն ապացույցները տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին վերադարձնելը կամ քրեադատավարական ռեստիտուցիան (հոդված 119), 2) դատարանի նախաձեռնությամբ ex officio տուժողին պատճառված վնասը հատուցելու մասին որոշում կայացնելը (հոդված 164), 3) տուժողին պատճառված վնասը պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցելը (հոդված 168), 4) քաղաքացիական հայցի ինստիտուտը (հոդվածներ 154-163):

Հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հիշյալ նեխանիզմների համակարգում քրեական դատավարությունում առանձնահատուկ տեղ է գրաղեցնում քաղաքացիական հայցի ինստիտուտը: Այն բնութագրվում է որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման բազային գործիք<sup>2</sup>, հանցագործությունից տուժողների խախտված գույքային և ոչ գույքային իրավունքների պաշտպանության ունիվերսալ միջոց<sup>3</sup>, որը, սակայն, ձևավորման պահից մինչ օրս

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՒՆ

Քրեական դատավարությունում միանշանակ չի ընկալվում թե իրավակիրառ պրակտիկայում, թե քրեաղատավարական իրավունքի տեսության մեջ:

Դեռևս 19-րդ դարի վերջերին, խոսելով քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտի մասին, Ցարական Ռուսաստանի իրավաբան գիտնականները նշում էին, որ այն հաճարվում է քրեական դատավարության վիճահարույց և առավել քիչ մշակված մասերից մեկը, որը դատական պրակտիկայում առաջացնում է մի շարք հիմնախնդիրներ։

1960 թվականին Ն. Ն. Պոլյանսկին, բնութագրելով քրեական դատավարության գիտության զարգացումները, հանգել է այդ նույն հետևողաբար։ Այդինիվ կործիրի ենակ Վ. Գ. Դակը՝ 1972 թվականին քննարկելով 1961 թվականի ՌՍՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված քաղաքացիական հայցի հիմնահարցերը։

Թեև նորմատիվ կարգավորման տեսանկյունից քաղաքացիական հայցի ինստիտուտը գործող քրեական դատավարության օրենսգրքում դրական առաջնորդաց է գրանցել 1961 թվականի՝ ՌՍՖՍՀ և ՀՍԽՀ քրեական դատավարության օրենսգրքերի համեմատ, քանի որ առանձին գլուխ է նվիրված քրեական դատավարությունում քաղաքացիական հայցին վերաբերող հարցերի կարգավորմանը (գլուխ 20), սակայն կարող ենք հավաստել, որ «սայլը տեղից չի շարժվել» նաև ներկայունս. մի շարք հարցերում այն նույնիսկ նահանջել է նախկին օրենսգրքերի համեմատ։ Այլ կերպ ասած՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը շարունակում է մնալ քրեական դատավարության առավել քիչ մշակված և վիճահարույց մասերից մեկը։

Այստեղ նպատակ ունենք քննարկելու հատկապես քաղաքացիական հայցը դատական քննության նախապատրաստելուն վերաբերող հիմնախնդիրները, որը, բերևս,

քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առավել չմշակված մասերից է։

Քրեական դատավարության կենտրոնական և վճռորոշ մասը դատական քննությունն է, որի ընթացքում ստուգվում են գործի բոլոր հանգանանքները, գնահատական են տրվում բոլոր այն ապացույցներին, որոնց հիման վրա պատասխան են տրվում ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցին, ինչպես նաև լուծվում են մի շարք այլ խնդիրներ, այդ թվում՝ հարուցված հայցին վերաբերող (ՀՀ քր. դատ. օր. 360-րդհոդվածի 1-ին մասի 10-րդ կետ)։

Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատական քննության պետք է հանգել այն գործերը, որոնցով առկա են քավարար ապացույցներ, և որոնց քննության ընթացքում պահպանվել են օրենքի բոլոր նորմերը այն հաշվարկով, որ դատական նիստը չձգձգվի, չվերածվի քաշընուկի, որպեսզի մարդիկ անհիմն մեղադրանքով չնստեն ամբաստանյալի արողին և այլն։ Այսինքն, դատական քննությունը պետք է կառուցվի և գործադի լավ ու բանականորեն կազմակերպված իրավական վեծի հիման վրա, որպեսզի հուսալիորեն երաշխավորի և մարդու իրավունքները, և քրեական հարկադրանքի արդյունավետությունը։

Այս տեսանկյունից քրեական դատավարության իրար հաջորդող փուլերի ամրողական համակարգում, մասնավորապես նախնական քննության և դատական քննության միջև անխուսափելիորեն անհրաժեշտություն է առաջանում ստուգելու, թե ինչ է արվել քրեական գործով այն հարուցելու և նախնական քննության ընթացքում, և ինչ պետք է արվի, որպեսզի այն առանց քաշընուկերի ու ձգձգումների անցնի դատավարության կենտրոնական փուլը։ Քրեական դատավարության տվյալ մասի նշանակությունը հանգում է մի կողմից՝ ստուգիչ (վերահսկիչ) գործառույթի, իսկ մյուս կողմից՝ նախապատրաստական (ապահովող) գործառույթի իրականացմանը։

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախնական քննության և դա-

տական քննության միջև գոյություն ունեցող փուլը վերնագրված է «Դատական քննության նախապատրաստում» (գլուխ 40-րդ), որի դատավարական կարգը կանոնակարգող նորմերի վերլուծությունից պարզ երևում է, որ այնտեղ խոսքը հիմնականում մեղադրանքի քննության համար պատշաճ պայմանների առկայությունը ստուգելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան նիշոցներ ձեռնարկելու մասին է:

Թեև տեսության մեջ անդրադառնալով քրեական դատավարության օրենսգրքի հիշյալ փուլին՝ հիմնավորվում է, որ գործող պայմաններում այն իրենից ներկայացնում է ոչ արդյունավետ ինստիտուտ, որում առկա են մի շարք հիմնախնդիրներ նույնիսկ մեղադրանքի քննության համար պատշաճ պայմանների առկայությունը ստուգելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան նիշոցներ ձեռնարկելու մասով<sup>8</sup>, այդուհանդերձ մեղադրանքի պատշաճ քննությունն ապահովելու մասով դատարանի որոշակի գործողություններ կատարելու մասին գոնե նշված է: Այս փուլում առավել խնդրահարույց է քաղաքացիական հայցի հարցը, քանի որ դատական քննության նախապատրաստական մասը կանոնակարգող նորմերում քաղաքացիական հայցի քննության համար պատշաճ պայմանների առկայությունը ստուգելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան նիշոցներ ձեռնարկելու մասին որևէ ակնարկ անգամ չկա, գործը դատական քննության նշանակելու մասին որոշմանը ներկայացվող պահանջների մեջ ընդամենը խոսվում է պատճառված վնասի ապահովման միջոցները վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին:

Դատական պրակտիկայում տարածված են այն դեպքերը, երբ քրեական գործեր են մտնում դատարան, որոնցով հայց հարցուցված չեն եղել, թեև հանցագործությամբ պատճառված է լինում քրեական դատավարության կարգը հատուցման ենթակա նյութական վնաս: Իսկ օրենքում կարգավորված չեն այն հարցերը, (1) թե արդյո՞ք դատարանը պարտավոր է պարզել՝ ին-

չու նախաքննության փուլում հանցագործությունից նյութական վնաս կրած անձը հայց չի հարցուցել՝ անտեսյակությա՞ն, թե՝ վարույթն իրականացնող մարմինների կողմից այդ իրավունքը դիտավորությամբ չքացատրելու կամ այլ պատճառով, (2) արդյո՞ք դատավորը պարտավոր է հանցագործությունից վնաս կրած անձանց պարզաբանել քրեական դատավարությունում այդ վնասը հատուցելու համար հայց հարցուցելու իրավունքը, (3) դատարանն ինչ գործողություններ պետք է կատարի այն դեպքում, եթե հայցը հարցուցվում է դատարան և այլն:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ օրենքում կարգավորված չէ նաև դատարանի գործողություններն այն դեպքերի համար, եթե քաղաքացիական հայցը ներկայացված է եղել մինչդատական փուլում, մասնավորապես պարզ չէ, թե դատարանը քրեական գործը վարույթ ընդունելուց և դրամից հետո ի հնչգործողություններ պետք է կատարի հայցի մասով, և արդյոք պետք է կատարի որևէ գործողություն, թե՝ ոչ:

Ա. Գ. Մազալովը, քննադատելով 1961 թվականի ՌՍՖՏՀ քրեական դատավարության օրենսգրքի դատի տալու փուլում հայցի մասով որևէ գործողություն կատարելու օրենսդրական կառուցակարգի բացակայությունը, դեռևս 1977 թվականին նշում էր, որ դատարանը տվյալ փուլում պետք է կատարի ոչ միայն մեղադրանքի, այլև հայցի մասով համապատասխան գործողություններ: Մեղադրյալին դատի տալու փուլում համապատասխան գործողություններ կատարելու մասին հանձնարականներ ժամանակին տալիս էր նաև ՍՍՀԱ Գերագույն դատարանի պլենումը<sup>9</sup>: Մինչ այս հարցերին անդրադառնալը նշենք, որ այդ հարցն այդպես էլ իր լուծումը չստացավ ինչպես այն ժամանակ, այնպես էլ ներկայումս, մինչդեռ հայցի մասով քրեական դատավարությունում նախապատրաստական գործողությունների կատարումն օրենքի անհրաժեշտություն է հատկապես այն առումով, որ հայցը քրեական դատավարությունում պետք է հարուցվի մինչև դատաքննությունը սկսվելը<sup>10</sup>: Այս

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Վիոլում հայցի մասով հաճապատասխան գործունեություն իրականացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է հենց տվյալ վիոլի խնդիրներով՝ գործի հետագա քննության համար պատշաճ պայմանների առկայությունը ստուգելը և անհրաժեշտության դեպքում հաճապատասխան միջոցներ ձեռնարկելը, որպեսզի այն առանց քաշքուկների և ձգձգումների անցի դատավարության կենտրոնական վիոլը:

Դա նշանակում է, որ դատարանը պետք է պարզի ինչպես մեղադրանքի, այնպես էլ քաղաքացիական հայցը քննելու և լուծելու համար անհրաժեշտ պայմանների առկայությունը ևս, և եթե անհրաժեշտ է, համապատասխան միջոցներ ձեռնարկի: Դրանով պայմանավորված՝ հիշյալ վիոլում անհրաժեշտ է կատարել մի շարք հիմնարար վիօլինավորություններ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ եթե այդ նույն հայցը ներկայացվի քաղաքացիական դատավարության կարգով, ապա այնտեղ դատարանի կողմից լուծվում են մի շարք հարցեր հայցը դատական քննության ընթացքում արդյունավետ քննելու և լուծելու համար: Քաղաքացիական դատավարությունում դատարանը նույնիսկ կարող է նախնական դատական նիստ հրավիրել<sup>11</sup>:

Հիշյալ վիոլում հայցի մասով հաճապատասխան գործողություններ կատարելու անհրաժեշտությունը թելադրվում է նաև իրավակիրառ պրակտիկայով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատարանները հայցի մասով նախապատրաստական վիոլում լուծման ենթակա հարցերին հաճախ անդրադառնում են դատավճռում, ինչը մի շարք խնդիրներ է առաջացնում: Օրինակ, **ԿԴ/0026/01/09** քրեական գործով դատարանը դատավճռով վերադարձել է «Սթար Դրվայդ» ՓԲԸ-ի ներկայացրած հայցադիմումն այն պատճռաբառությամբ, որ դա չի հաճապատասխանել հայցադիմումին առաջադրվող պահանջներին<sup>12</sup>: Մեկ այլ գործով դատարանը դատավճռով հայցը թողել է առանց քննության:

յան այն պատճռաբառությամբ, որ հայցադիմումը չի համապատասխանել օրենքում սահմանված պահանջներին, և հայցվորի կողմից դատարան ներկայացված չեն եղել պատասխանողների քանակով հայցի պատճռեմեր<sup>13</sup>: Դատարանները մինչդատական վարույթում հարուցված հայցերը դատական քննության վիոլում քննարկման առարկա հաճախ չեն դարձնում, իսկ դատավճռում պատճռաբառապատճռում են, որ քաղաքացիական հայցվորը դատարանին օրենքով սահմանված ձևով կազմված հայցադիմումը չի ներկայացրել<sup>14</sup> և այլն:

Զանդրադառնալով այն հարցերի քննարկմանը, որ հայցադիմումի վերադարձման կամ օրենքին չհամապատասխանելու հիմքով այն առանց քննության թողնելու հնարավորություն քրեական դատավարության օրենսգիրքը չի տալիս, նշենք, որ դատարանները, հայցադիմումը օրենքին չհամապատասխանելու հիմքով մի դեպքում դատավճռով վերադարձնելով, մյուս դեպքում թողնելով առանց քննության, խախտել են հայցվորի արդարադատության մատչելիության և դատական պաշտպանության իրավունքները: Եթե հայցադիմումի ձևին ներկայացվող հարցերը քննարկվեր քննության վաղ վիոլերում, մասնավորապես՝ մինչև դատաքննության սկսվելը, ապա դատարանը կընդուներ որոշում հայցադիմումն ընդունելուց հրաժարվելու մասին<sup>15</sup>, իսկ հայցվորը կարող էր վերացնել հայցադիմումի թերությունները և կրկին ներկայացնել հայցը՝ դրանով իսկ նաև հնարավորություն ունենալով ստանալ հայցի բավարարում: Թեև պետք է նկատել, որ օրենքը չի էլ սահմանում, թե քննության որ վիոլում պետք է դատարանը քննարկի հայցադիմումի՝ օրենքին հաճապատասխանության հարցը, սակայն խնդիրն այն է, որ հայցադիմումը թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու իրավակարգավորում օրենքը նույնապես չի տալիս, ուստի պարզ չէ նաև այն, թե դատարանի կողմից հայցադիմումն ընդունելուց հրաժարվելու դեպքում հայց ներկայացրած անձն ինչ գործողություններ կարող է կատարել և այլն:

Այստեղ առավել անտրամաբանական է այն, որ, փաստորեն, դատարանները դատաքննության փուլում հայցի քննություն ընդհանրապես չեն իրականացրել, հակառակ պարագայում այդ ժամանակ կարող էին հայցվորին պարզաբանել, որ իր ներկայացրած հայցադիմումը չի համապատասխանում օրենքի պահանջներին: Սա նույնպես խորհելու տեղիք է տալիս. ստացվում է, որ հայցի քննություն դատարանն իրականացնում է խորհրդակցական սենյակում դատավճրության:

Ս. Ո. Սամիտովի կարծիքով, թեև քրեական դատավարության օրենսգրքում դատական քննության նախապատրաստական փուլում հայցի մասով դատարանի գործողությունները կանոնակարգված չեն, սակայն դա բացառում այդ շրջանում քաղաքացիական դատավարության օրենսգրքի համանում փուլը դատարանի կանոնակարգող նորմերի կիրառման հնարավորությունը: Այս նոտեցումը հիմնավորում է նաև Վ. Գորոբեցը<sup>16</sup>:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի մասով քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները կիրառելու հնարավորություն նախատեսում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, սակայն պետք է նկատել, որ դա չի կարող համարվել մեր կողմից առաջ քաշած հարցերի լուծում:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանները դատական քննության նախապատրաստական փուլում ընդհանրապես չեն քննարկում հայցին վերաբերող որևէ հարց, ուստիև չեն դեկավարվում քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոններով: Մեր կողմից ուսումնասիրված 100-ից ավելի գործերից որևէ մեկում դատարանները հայցի մասով նախապատրաստական որևէ գործողություն չին կատարել: Դա պատահական չէ, քանի որ քրեական դատավարության օրենսգրքի դատական քննության նախապատրաստական մասը կանոնակարգող նորմերում այդ մասին նշում չկա, իսկ քրեական դատավարությունում քաղաքացիական դատավա-

րական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է այնքանով, որքանով դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և եթե քաղաքացիական հայցով վարույթի հանար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն քրեական դատավարության օրենսգրքով (քր. դատ. օր. 154 հոդվ. 2-րդ մաս): Այսինքն, դատարանը յուրաքանչյուր դեպքում, որպեսզի քրեական դատավարությունում կիրարի քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը, պետք է վերլուծի, թե քաղաքացիական դատավարության օրենսգրքի որ նորմերն են կիրառելի քրեական դատավարությունում հայցով վարույթի նկատմամբ, որոնք՝ ոչ, արդյո՞ք այդ նորմերը չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին և այլն, ինչը գործնականում մի շարք դժվարություններ է առաջացնում:

Այսպիսի պատճառաբանություն էին ներկայացնում նաև դատավորներ՝ պատասխանելով մեր այն հարցին, թե ինչու հայցով որևէ գործողություն չեն կատարում դատական քննության նախապատրաստական փուլում:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ քրեական դատավարությունում առկա է մինչդատական վարույթ, որի ընթացքում հայցի մասով կատարվում են մի շարք գործողություններ (հայցվոր և պատասխանող ճանաչելը, հայցի ապահովման հանար անհրաժեշտ միջոցներ ծեռնարկելը և այլն), որոնք հետագայում դառնում են դատարանի քննարկման առարկա, ուստի այս տեսանկյունից դատարանի գործողություններն իրենց բնույթով տարբերվում են հայցը դատարանում հարուցվելու դեպքում դատարանի գործողություններից: Իսկ քանի որ քաղաքացիական դատավարությունում մինչդատական վարույթ առկա չէ, ուստի քաղաքացիական դատավարությունում չկան սահմանված իրավակարգավորումներ մինչդատական վարույթում հարուցված հայցի մասով դատարանի նախապատրաստական գործողությունների մասին: Նետեսաբար, եթե անգամ քաղաքա-

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ցիական դատավարության կանոնները քրեական դատավարությունում կիրառելի լինեն, ապա, միևնույն է, դրանք բավարար չեն հայցին վերաբերող մի շարք հարցեր լուծելու համար: Դեռ ավելին, եթե նաև նկատի ունենանք, որ հանրայնության սկզբունքին համապատասխան՝ քրեական դատավարությունում դատարանը պետք է որոշակի ակտիվություն դրսնորի քաղաքացիական հայցի մասով, ապա կարելի է փաստել, որ քաղաքացիական դատավարության կանոնները բավարար չեն քրեական դատավարությունում հայցի մասով անհրաժեշտ նախապատրաստական միջոցներ ձեռնարկելու համար:

Այսպիսով, անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքում հստակ ամրագրել այն նորմերի համակցությունը, որոնք կանոնակարգեն դատարանի գործողություններն ինչպես հայցը մինչդատական վարույթում հարուցված լինելու ժամանակ, այնպես էլ այն դեպքում, երբ հայցը հարուցվում է դատարանում:

Նկատենք, որ այս հարցի առնչությամբ նոր քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգում որոշակի կանոնակարգումներ փորձ է արվել սահմանել. մասնավորապես՝ «նախնական դատական լուսները քրեական դատավարությունում» վերտառությամբ 7-րդ կետում սահմանված է, որ նախնական դատական լուսների ընթացքում ենթակա են քննարկման քաղաքացիական հայցվոր և պատասխանող ճանաչելու հարցերը:

Սա պետք է առաջարկեաց համարել, սակայն հայեցակարգում սահմանված դրույթները նույնպես չեն կարող լուծել մեր կողմից առաջ քաշած հարցերը: Խնդիրն այն է, որ հայեցակարգի 7.4-րդ կետում սահմանված է, որ քաղաքացիական հայցվոր և պատասխանող ճանաչելու հարցերը դատարանը կարող է քննարկել ոչ թե սեփական նախաձեռնությամբ, այլ միայն դատավարության մասնակցի միջնորդությամբ:

Ինչպես արդեն նշել ենք, քաղաքացիական հայցվորը և պատասխանողը դատավարության մասնակից են դառնում, եթե վարույթն իրականացնող մարմնի որոշմանը ճանաչվում են որպես այդպիսին: Հայցվոր ճանաչվելու համար անձը պետք է առնվազն տեղեկացված լինի հայց հարուցելու իրավունքի մասին, որպեսզի այն հարուցի, իսկ այդ իրավունքը պետք է պարզաբանի նաև դատարանը: Սա նշանակում է, որ դատարանը տվյալ փուլում, տեսնելով, որ կան հայցվոր ճանաչելու ենթակա անձինք, սակայն մինչդատական վարույթում չեն ճանաչվել որպես այդպիսին, պետք է տվյալ անձին գրավոր պարզաբանի հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար հայց հարուցելու իրավունքը, որից հետո, եթե անձը հարուցում է հայց, դատարանը պետք է լուծի հայցվոր ճանաչելու հարցը: Ինչ վերաբերում է պատասխանող ճանաչելու հարցին, ապա դա պետք է լուծի դատարանը սեփական նախաձեռնությամբ և ոչ թե դատավարության մասնակցի միջնորդությամբ (թեև կարող է լուծել նաև միջնորդությամբ, սակայն սա լրացուցիչ մեխանիզմ է), ընդ որում՝ այն դեպքում, եթե կա հարուցված հայց:

Այս պայմաններում թվում է, որ հայեցակարգային դրույթը կրում է ձևական բնույթը, ավելին՝ կան մի շարք հարցեր, որոնք հայեցակարգում ընդհանրապես լուծում չեն ստացել, որոնց կանդրադառնանք ստորև:

Դատավորը, իր վարույթը ընդունած քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզելով, որ քրեական օրենսգրքով չըույլատրված արարով քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա վճառ է պատճառվել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, սակայն նրանց այդ իրավունքը նախաձեռնության ընթացքում չի պարզաբանվել, և վերջիններս հայց չեն ներկայացրել, պարտավոր է նրանց կամ նրանց ներկայացուցիչներին գրավոր տեղեկացնել այդ վճառի հատուցման համար քրեական դատավարությունում քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունքի մասին: Ընդ ո-

րում՝ մինչև դատաքննությունը սկսվելը<sup>17</sup>:

Եթե նրանք հարուցուն են հայց, ապա դատարանը պետք է անդրադառնա հայցը դատական մարմիններին ընդդատյա լինելու, հայցադիմումի օրենքին համապատասխանության (հայցադիմումը վերադարձնելու), հայցվոր կամ պատասխանող ճանաչելու, հայցի հիմքի և առարկայի, հայցի ապահովման միջոցներ ծեռնարկելու, հայցվորին և պատասխանողին գործի նյութերին ծանոթացնելու հարցերին: Դիշյալ գործողությունների կատարման անհրաժեշտությունը առաջանում է նաև ներկայումս, սակայն քանի որ դրանք գործող օրենքում կանոնակարգված չեն, հետևաբար դատարանները քննարկվող փուլում որևէ գործողություն հայցի մասով չեն կատարում: Փոխարենն այդ հարցերին անդրադառնում են դատավճռով:

Ինչպես նշեցինք, հայցը դատարանում ներկայացնելու դեպքում դատարանի գործողություններից պետք է տարբերակել դատարանի գործողություններն այն դեպքերի համար, երբ հայցը ներկայացված է եղել մինչդատական վարույթում:

Դատական քննության նախապատրաստական մասում դատարանը նախառաջ պետք է քննարկի հայցը դատական մարմիններին ընդդատյա լինելու հարցը: Դատարանը, գտնելով, որ մինչդատական վարույթում հարուցված հայցը ենթակա չէ դատական մարմինների քննության, պետք է որոշում կայացնի հայցով վարույթը կարծելու մասին՝ նկատի ունենալով, որ հայցով վարույթը սկսված է եղել մինչդատական վարույթում<sup>18</sup>: Իսկ եթե հայցը ներկայացվում է դատարան, և պարզվում է, որ այն ընդդատյա չէ դատական մարմիններին, ապա հայցվորը չի ճանաչվում որպես այդպիսին: Այս մոտեցման իրավաչափությունն այն է, որ այս դեպքում հայցով վարույթ դեռևս սկսված չէ, հետևաբար կարծելու մասին խոսք չի կարող լինել: Այս դեպքում դատարանը չպետք է մերժի հայցադիմումի ընդունումը, ինչպես քաղաքացիական դատավարությունում /ՀՀ քաղ. դատ. օր. 91-րդ հոդված/, քանի որ, ի տարբերություն քաղաքացիական դատավա-

րության, քրեական դատավարությունում առկա է հայցվոր ճանաչելու կամ մերժելու ինստիտուտ, ուստիև հիշյալ հիմքերի դեպքում դատարանը ոչ թե մերժում է հայցադիմումի ընդունումը, այլ հայց ներկայացրած անձին մերժում է հայցվոր ճանաչելը:

Դատարանը, գտնելով, որ հայցը ենթակա է դատարանում քննության, և առկա չեն հայցով վարույթը կարծելու հիմքերը, պետք է պարզի, թե հայցադիմումը համապատասխանո՞ւմ է օրենքով սահմանված պահանջներին, հայցը բխո՞ւմ է արդյոք մեղադրանքից, և արդյո՞ք հայցվորի պահանջը կարո՞ղ է լինել քրեական դատավարությունում հայցի առարկա, ծեռնարկվե՞լ են արդյոք հայցի ապահովման համար անհրաժեշտ միջոցներ, և պահպանվե՞լ են օրենքի պահանջները մեղադրյալի (պատասխանողի) գույքի վրա կալանք դնելիս, պատշաճ անձինք են ճանաչվե՞լ հայցվոր և պատասխանող, պահպանվե՞լ են արդյոք հայցվորի և պատասխանողի իրավունքները երաշխավորող քրեադատավարական օրենքի պահանջները, արդյո՞ք հայցով պատասխանողների քանակով հայցադիմումի պատճեններ ներկայացվել են դատարան և այլն:

Եթե հայցադիմումը չի համապատասխանում օրենքում սահմանված պահանջներին, դատարանը (ոչ թե նախաքննության մարմինը, քանի որ վերջինս նամա իրավունք չպետք է ունենա) պետք է այն վերադարձնի հայց ներկայացրած անձին (այլ ոչ թե իրաժարվի այն ընդունելուց՝) թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու համար, և եթե հայց ներկայացրած անձը մինչև դատարանությունը սկսվելը հայցադիմումի թերությունները վերացնում և կրկին ներկայացնում է հայցադիմում, ապա դատարանը որոշում է կայացնում անձին հայցվոր ճանաչելու մասին: Այս կանոնը վերաբերում է այն դեպքին, եթե հայցը մինչդատական վարույթում ներկայացված չի եղել, քանի որ այդ դեպքում անձը արդեն իսկ ճանաչված է հայցվոր: Այս կանոնը անհրաժեշտ է հատակ ամրագրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայցադիմումը օրենքում սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում դատարանն անցնում է մնացած հարցերին:

Եթե հայցը չի բխում մեղադրանքից, կամ հայցի առարկան չի համապատասխանում քրեական դատավարությունում հայցի առարկային, ապա դատարանը պետք է որոշում կայացնի հայցը առանց քննության թողնելու մասին՝ քաղաքացիական դատավարության կարգով հայցվորի կողմից հայց հարուցելու իրավունքի պարզաբանմաբ<sup>19</sup>:

Այն դեպքում, եթե ոչ պատշաճ անձինք են ճանաչվել հայցվոր և պատասխանող, դատարանը պետք է լուծի նաև պատշաճ հայցվորի և պատասխանողի հարցը: Եթե հայցվոր է ճանաչվել այն անձը, ով իրավունք չունի տվյալ քրեական գործի քննության ընթացքում հայց հարուցելու, ապա դատարանը վերացնում է հայցվոր ճանաչելու մասին նախաքննության մարմնի որոշումը և անձին պարզաբանում այդ որոշումը բողոքարկելու իրավունքը: Այս դեպքում դատարանը պետք է համագործությունից հրական վճար անձին գրավոր տեղեկացնի հայց հարուցելու նրա իրավունքը, և եթե վերջինս հարուցում է հայց, ապա պետք է լուծի հայցվոր ճանաչելու և այլ հարցեր: Եթե սխալ է որոշվել հայցով պատասխանողը, ապա դատարանն իրավունք ունի լուծելու նաև ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխելու հարցը:

Կարծում ենք, այս հարցերը նույնպես պետք է քրեական դատավարության օրենսգրքում իրենց ամրագրումն ստանան: Հատկապես պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հայցվոր և պատասխանող սուբյեկտների՝ քրեալիքատավարական իրավահարաբերությունների ոլորտում հայտնվելու հարցը լուծում են հենց վարույթն իրականացնող մարմինները, այդ թվում դատավորը: Միայն այն, որ դատարանը պարտավոր է<sup>20</sup> հանցագործությունից վճար կրած անձին բացատրել նրա՝ հայց

հարուցելու իրավունքը, իսկ հարուցվելու դեպքում՝ նրան ճանաչել հայցվոր, ինչպես նաև այն, որ հայց հարուցվելուց հետո դատարանը պարտավոր է օրենքի հիման վրա որոշել նաև հայցով պատասխանողին, և եթե մեղադրյալը չէ, ապա պարտավոր է մեղադրյալի գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձին ճանաչել քաղաքացիական պատասխանող, բավկական է, որպեսզի քրեական դատավարության օրենսգրքում հստակ ամրագրված լինեն պատշաճ հայցվորի և պատշաճ պատասխանողի հարցի լուծնարը վերաբերող իրավակարգավորումներ:

Այս դեպքում նույնպես կարելի է գուգահեր անցկացնել քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների հետ՝ բնականաբար հաշվի առնելով քրեական դատավարության առանձնահատկությունները: Հատկապես այն, որ քրեական դատավարությունում ոչ պատշաճ հայցվորը և պատասխանողը չեն կարող գործում մնալ որպես համապատասխանող, համահայցվոր, երրորդ անձ՝ ինքնուրույն պահանջ ներկայացնող կամ չներկայացնող և այլն: Անձը հանցագրությունից կամ կրել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա վճար, կամ ոչ, անձը կամ պատասխանատու է մեղադրյալի գործողությունների համար, կամ ոչ: Այլ տարրերակ քրեական դատավարությունում բացառվում է:

Ճանաչելով հայցվոր և պատասխանող՝ դատարանը պետք է լուծի նաև նրանց՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու հարցը:

**Դատարանում այս գործողությունը կատարելու անհրաժեշտությունը զգացվում է նաև ներկայումս, քանի որ առանց քրեական գործի նյութերին ծանոթանալու դժվար է պատկերացնել ինչպես հայցվորի կողմից հայցը պաշտպանելը, այնպես էլ պատասխանողի կողմից դրա դեմ առարկելը: Մինչեռ, այս հարցերը ներկայումս կանոնակարգված չեն, ինչը կարելի է դիտել օրենքի բացը՝ նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հայցվորի և պատասխանողի իրավունքները սահմանանող 61-րդ և 75-րդ հոդվածներում**

սահմանված են միայն նախաբննության ավարտին գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը: Մինչդեռ, դրա անհրաժեշտությունը դատական քննության փուլում անկասկած է, քանի որ այն հանգանաճը, որ գործող կարգավորմանը հայցը կարող է հարուցվել մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

Անհրաժեշտ է օրենքում հստակ սահմանել, որ եթե հայցը հարուցվում է դատական քննության նախապատրաստական մասում կամ մինչև դատաքննությունը սկսվելը, դատարանը, լուծելով հայցվոր և պատասխանող ճանաչելու հարցը, պարտավոր է միաժամանակ լուծել նաև հիշյալ սուբյեկտների կողմից քրեական գործի

նյութերին ծանոթացնելու հարցը:

Դատարանը պետք է լուծի նաև հայցի ապահովման համար միջոցներ ձեռնարկելու հարցը. Եթե պարզում է, որ այդպիսիք չեն ձեռնարկվել: Եթե որպես հայցի ապահովման միջոց կալանը է դրվել այն անձանց գույքի վրա, որոնք պատասխանատու չեն հանցագործությամբ պատճառված վնասի համար և այլն, ապա դատարանը պետք է անդրադառնա նաև հիշյալ հարցի լուծնանը:

**Այսպիսով, կարող ենք եղակացնել, որ քաղաքացիական հայցի քննության մասով առաջին ատյանի դատարանում կարույր արմատական փոփոխման կարիք ունի, որ պեսզի հնարավոր լիմի ապահովել հայցային կարույրի արդյունավետությունը:**

<sup>1</sup>Տե՛ս www.armstat.am

<sup>2</sup>Տե՛ս Золотая Е. А. Исковой способ защиты имущественных прав лиц, нарушенных преступлением. Автореф. Дисс. на к.ю.н. Нижний Новгород, 2006:

<sup>3</sup>Տե՛ս Имангазиева Ж. У. Проблемы гражданско-уголовного иска в уголовном процессе: Автореф. дисс. канд. юрид. наук. Астана, 2008:

<sup>4</sup>Տե՛ս Коны А. Ф. Юридическая летопись 1891, И 1, с. 40, Тальберг Д. Г. Гражданский иск в уголовном деле или соединенный процесс, Киев, 1888:

<sup>5</sup>Տե՛ս Полянский Н. Н. Очерк развития советской науки уголовного процесса. М., 1960, с. 207:

<sup>6</sup>Տե՛ս Даев В. Г. Современные проблемы гражданско-уголовного иска в уголовном процессе. Л., 1972:

<sup>7</sup>Տե՛ս Ղազինյան Գ. Ս. և ուրիշներ: ՀՀ քրեական դատավարություն, հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, Երևան, 2003, էջ 269:

<sup>8</sup>Տե՛ս նոյն տեղը

<sup>9</sup>Տե՛ս О практике применения судами законодательства о возмещении материального ущерба, причиненного преступлением: Постановление Пленума Верхов. Суда СССР от 23.03.1979 N 1 // Сборник постановлений Пленумов Верховных судов СССР и РСФСР (РФ) по уголовным делам. М, 1995:

<sup>10</sup>Մենք այն կարօֆքին ենք, որ հայցը պետք է հարուցվի մինչև դատաքննությունը սկսվելը, քանի որ գործող կարգի դեպքում (հայցը մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը հարուցելը) խախտվում է հայցից պաշտպանվելու իրավունքը:

<sup>11</sup>Այս հարցերին կանդիադառնանք հետագայում:

<sup>12</sup>Դատարանը մասնավորապես նշել է. «Ըստ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերի կիրառումը բույատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով»: Այս դեպքում կիրառելի է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածը, համաձայն որի՝ «Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել սույն օրենսգրքի 87-րդ հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները», իսկ հայցվորը ներկայացնելով հայցադիմումը չի ներկայացրել, թե բացի Խ.Շահինյանից այն ուն դեմ է ուղղված /նշվել է մյուսներ/, բացի այդ հայցադիմումում արտացոլված չեն պատասխանողների լրիվ վավերապայմանները /հասցեներ, անձնագրային տվյալներ և այլն/»:

## ՔՐԵՎԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

<sup>13</sup> Տե՛ս Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 05.05.2010 թվականի Ա.Կ.Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործով դատավճիռը:

<sup>14</sup> Տե՛ս, օրինակ, քրեական գործ թիվ ՀՅՔՐԴ 2/0150/1/08:

<sup>15</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն՝ եթե հայցադիմումը չի համապատասխանում օրենքի պահանջներին, դատարանը կարող է հրաժարվել հայցադիմումը ընդունելուց: Այս առումով արժանի է ուշադրության 2006 թվականի հունիսի 13-ի ԴՆԽ թիվ 100 որոշումը, որում սահմանված է, որ քաղաքացիական հայցը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու դեպքում դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն կայացնում է **որոշում հայցադիմումն ընդունելուց հրաժարվելու մասին**:

<sup>16</sup> Տե՛ս Գորобец Բ. Особенности рассмотрения гражданского иска в уголовном процессе// Российская юстиция. 2001/1, с. 4:

<sup>17</sup> Այս առաջարկությունը մեր այն մոտեցման շարունակությունն է, որի համաձայն՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է գրավոր տեղեկացնել հանցագործությունից վնաս կրած անձին քրեական դատավարությունում հայց հարուցելու իրավունքը, և եթե վերջինս հարուցում է հայց, ապա նա պարտավոր է ճանաչել հայցվոր և պարզաբանել հայցվորի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ապահովել հայցվորին այդ իրավունքներից օգտվելու հնարավիրությունը և այլն (տե՛ս Ս. Մարաբյան Հանցագործությունից վնաս կրած անձին հայցվոր ճանաչելու դատավարական կարգի որոշ իմբնախնդիրներ ՀՀ քրեական դատավարությունում, Պետություն և իրավունք, 2010, թիվ 2(48), էջեր 64-76):

<sup>18</sup> Քրեական դատավարությունում, բացի «Ենթակայության» հիմքով հայցի վարույթը կարծելուց, անհրաժեշտ է սահմանել նաև այլ հիմքերով հայցով վարույթը կարծելու դեպքե-

րը, հատկապես եթե հայցը ներկայացված է եղել նիմշդատական վարույթում, կամ եթե այդ հիմքերը ի հայտ են եկել դատական քննության ընթացքում: Այս առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա են անհրաժեշտ իրավական նախադրյալներ. խոսքը, մասնավորապես քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի մասին է, որոնց համաձայն՝ **նույն քաղաքացիական հայցով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշման առկայությունը, հայցից քաղաքացիական հայցվորի հրաժարումն ընդունելու կամ հաշտության համաձայնությունը հաստատելու մասին դատարանի որոշման առկայությունը, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիքի առկայությունը, որով հայցը մերժվել կամ լրիվ կամ մասնակի բավարպել է, բացառում են քաղաքացիական հայցի հարուցումը:** Ինչպես տեսնում ենք, օրենքում խոսվում է հիշյալ պայմանների առկայության դեպքում հայց հարուցելը բացառելու մասին, սակայն թե ինչ պետք է հասկանալ բացառել ասելով, օրենքից պարզ չէ: **Նետարաբար հարց է ծագում. օրինակ, եթե հիշյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում հայցն այնուամենայնիվ հարուցվում է, դատարանն ի՞նչպես է անի:** Կարծում ենք՝ վերոնշյալ հիմքերի առկայության դեպքում հայցով վարույթը կարճելը, եթե հայցը ներկայացված է եղել նիմշդատական վարույթում, կամ եթե այդ հիմքերը ի հայտ են եկել դատական քննության ընթացքում, հարցի լուծման առաջելը տրամաբանական տարրերակ է: Նման իրավակարգավորում սահմանված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որի 109-րդ հոդվածում սահմանված հայցով վարույթը կարծելու հիմքերը գործեն նույն են, ինչ վերոնշյալ հիմքերը:

<sup>19</sup> Այս մասին տե՛ս ԴՆԽ 2006 թվականի հունիսի 13-ի թիվ 100 որոշումը.

<sup>20</sup> Դատավորի պարտականության մասին մանրամասն տե՛ս Ս. Մարաբյան, Ծված աշխատությունը, Պետություն և իրավունք, 2010, թիվ 2(48), էջեր 64-76:

## ПРОБЛЕМЫ ПОДГОТОВКИ ГРАЖДАНСКОГО ИСКА К СУДЕБНОМУ ЗАСЕДАНИЮ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

**Сергей МАРАБЯН**

Начальник организационно-правового управления судебного департамента РА,  
Соискатель кафедры уголовного  
процесса и криминалистики ЕГУ

**В** статье автор обсуждает проблемы подготовки гражданского иска судебному разбирательству.

В действующем законодательстве уголовного судопроизводства, в той части норм, регулирующих подготовку дел к судебному разбирательству, нет даже намека на проверку наличия условий и при необходимости принятия соот-

ветствующих мер для рассмотрения гражданского иска, что в судебной практике часто дает основание для нарушения законных интересов и имущественных прав личностей.

Анализируя судебную практику, опыт стран СНГ и специализированную литературу, автор приходит к тому заключению, что в законе надо урегулировать такие вопросы, какие действия должен предпринять судья в том случае, когда иск был предъявлен в досудебном процессе, а также в случае предъявления иска в суд, как гарантию обеспечения законных интересов и имущественных прав личностей.